

## ՏԵՂԱՅԻՆ ՍԵՍԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2005թ. մարտի 15-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած TACIS նախագծերի թիմերի ղեկավարների հանդիպմանը,
- ✓ 2005թ. մարտի 16-ին ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Սիրգոյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը մասնակցել են ք.Երևանում կայացած «Եվրոպական ինտեգրման գրադարան» թեմայով շնորհանդեսին,
- ✓ 2005թ. մարտի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Հ.Պետրոսյանը մասնակցել է ք.Երևանում կայացած «Գեների և քաղաքականությունների ծրագիրը Հարավ Կովետիտրիդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները» խորագրով գրքույկի շնորհանդեսին,
- ✓ 2005թ. մարտի 25-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ.Դանիելյանը մասնակցել է ք.Երևանում «Հայաստանյան զարգացումներ» պարբերականի խմբագրական խորհրդի հերթական նիստին,
- ✓ 2005թ. մարտի 30-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի պետ Ա.Պետրոսյանը մասնակցել է ք.Երևանում կայացած Եվրամիության և Եվրամիության անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի ներդրման ազգային ծրագրի N 24 «Ֆինանսական վերահսկում, ֆինանսական և բյուջետային դրույթներ» աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2005թ. մարտի 30-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույունջյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանում արտագնա աշխատանքային միգրացիային առնչվող խնդիրներին նվիրված հերթական աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2005թ. ապրիլի 1-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Կարապետյանը մասնակցել է ք.Երևանում կայացած TACIS-ի 2006թ. Գործողությունների ծրագրի հիմնական ուղղություններին և Եվրոպական հարևանության քաղաքականությանը նվիրված քննարկումներին,
- ✓ 2005թ. ապրիլի 8-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ.Անանյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը մասնակցել են ք.Երևանում կայացած TACIS-ի 2006թ. Գործողությունների ծրագրի հիմնական ուղղություններին և Եվրոպական հարևանության քաղաքականությանը նվիրված սեմինար-քննարկմանը,

- ✓ 2005թ. ապրիլի 13-21-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ.Պետրոսյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա.Մուրադյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ս.Հունանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն.Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Թոխաթյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Ա.Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «SPSS ծրագրային փաթեթի կիրառումը վիճակագրական և սոցիալական հետազոտություններում» թեմայով դասընթացին,
- ✓ 2005թ. ապրիլի 18-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Ներդրումները զարգացման համար» և «Ազգային Սոցիալական Մոնիթորինգի համակարգ» թեմայով հանդիպումներին,
- ✓ 2005թ. ապրիլի 20-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույունջյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք.Երևանում կայացած «Աշխատանքի միգրացիայի սոցիոլոգիական հետազոտություն» թեմայով սեմինարին,
- ✓ 2005թ. ապրիլի 20-22-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն.Բաղդասարյանը մասնակցել են ք.Երևանում կայացած անապահովության գնահատման վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2005թ. ապրիլի 25-27-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Կարապետյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած «Ծրագրի ցիկլի կառավարում» թեմայով սեմինարին,
- ✓ 2005թ. ապրիլի 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա.Ավետիսյանը մասնակցել է ք.Երևանում կայացած «Փախստականների սոցիալական կապիտալը և զբաղվածությունը» թեմայով հետազոտության արդյունքների ներկայացմանը,
- ✓ 2005թ. ապրիլի 29-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Գ.Գևորգյանը և Հ.Պետրոսյանը մասնակցել են ք.Երևանում կայացած Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի իրագործման առաջին քննարկմանը: